

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷԹԻԿԱՆ

Գիտությունը չարիքի սանձն է:  
**Ն. Յովնաթան**

Գիտության զարգացման վերլուծությունից բխում է, որ այն մարդկային մշակույթի պատմական զարգացման փուլերից մեկն է: Հ. Սելյեն գիտնականի գործունեության մղումները բացատրում էր այսպես. *«Բնության և ճշմարտության նկատմամբ պարզ հետաքրքրասիրություն, անշահախնդիր սեր, ինչպես նաև հիացմունք օրինաչափությունների գեղեցկությամբ, օգուտ բերելու ցանկություն, հաջողության դափնիներ, վախ ձանձրույթի նկատմամբ»*<sup>1</sup>:

Ի սկզբանե գիտության մեջ ակնհայտ էր հակասություն. մի կողմից՝ գիտությունն աշխարհի մասին ճշմարտությունը գտնելու միջոց էր, իսկ մյուս կողմից՝ ուղղված էր բնության նկատմամբ մարդու գերիշխանությունը հաստատելուն և այն վերափոխելուն: Այդ երկու նպատակները միավորելով՝ Ֆ. Բեկոնը գրում է, որ *«գիտությունների իրական և օրինաչափ նպատակը պետք է լինի մարդու կյանքը հարստացնել նոր հայտնագործություններով ու նոր հզորությամբ»*: Հետագայում, սակայն, մարդիկ սկսեցին գիտությունն օգտագործել իրենց հզորությունը բնության նկատմամբ ապահովելու համար, որպեսզի, ինչպես գրել է Դեկարտը, կարողանան դառնալ *«բնության տերերը»*:

Բայց, վերջիվերջո, ո՞րն է գիտության զարգացման մեջ գլխավորը՝ մարդու ինքնաճանաչումը իրեն շրջապատող աշխարհում, թե՞ բնության հնազանդեցումը: Այս հարցը գնալով սրվում է:

Ըստ Ա. Ա. Գորելովի՝ գիտությունը գտնվում է շարունակական զարգացման մեջ և անհնար է կանխագուշակել, թե ո՞ր ուղիով այն կընթանա, ինչպիսին կլինեն հաջորդ հայտնագործությունները:

*«Գիտությունը զարգանում է զգայականի և տրամաբանականի սահմաններում և սահմանափակված է մեր զգայարանների հնարավորություններով և մտածողության օրենքներով, որոնք գիտությունը սահմանափակող պայմաններ են: Գիտությունը, կարծես, գտնվում է եռանկյան մեջ, որի սահմանները մարդու հնարավորություններն են ու բնության ստեղծագործությունը: Այն մշտապես ընդլայնում է իր սահմանները՝ սկզբունքորեն մնալով սահմանափակ: Գիտության զարգացումը կարող է բերել կենսոլորտի ոչնչացման: Գիտությունը դա կարող է անել, սակայն ի վիճակի չէ ստեղծել հավասարազոր արհեստական աշխարհ: Մարդու և մարդկության համար ավելի հեշտ է ավերելը, քան ստեղծելը: Այդ պատճառով էլ ներկայումս գիտությունը կանգնել է էթիկական սահմանափակման առջև:*

*Այսպիսով, էմպիրիկ, տեսական և առարկայական սահմանափակումներին ավելացել է նաև էթիկական սահմանափակումը: Այդ պատճառով էլ խիստ հրատապ ու կարևոր են «էթիկան և գիտությունը» հիմնախնդիրը և գիտությունը «բարի՞ք է, թե՞ չարիք» հարցադրումը»*<sup>2</sup>:

Գիտական գործունեության հիմնարար կառուցվածքային առանձնահատկությունը նրա բաժանված լինելն է առանձին գիտաճյուղերի: Դա ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Նեղ գիտությունները հնարավորություն ունեն մանրամասն ուսումնասիրել կյանքի առանձին դրսևորումները, բայց միաժամանակ անտեսվում է նրանց միջև եղած կապը, իսկ բնության մեջ, ինչպես նշում է Էյլովգիայի օրենքը, «ամեն ինչ կապված է ամեն ինչի հետ»: Գիտությունների

<sup>1</sup> Селье Г. *От мечты к открытию*. Москва., 1987.

<sup>2</sup> Горелов А. А. *Концепция современного естествознания*. Москва, 2000, стр. 227.

տարանջատվածությունը խանգարում է շրջակա միջավայրի կոմպլեքս հետազոտություններին. քանի որ բնությունը միասնական է, միասնական պետք է լինի նաև բնության բոլոր երևույթների մասին գիտությունը:

*«Գիտության զարգացման հակասություններից մեկն այն է, որ մի կողմից՝ օբյեկտիվ ինֆորմացիա ապահովելով աշխարհի մասին, միաժամանակ վնասում է նրան (տարբեր գիտափորձերի ժամանակ) կամ ինչ-որ բան ոչնչացվում է գիտական ինֆորմացիայի արդյունքում (կյանքի ձևեր): Բայց ամենակարևորը, գիտությունը կորցնում է մարդկանց երջանիկ դարձնելու և նրանց համար ճշմարտությունը բացահայտելու հույսը»<sup>3</sup>:*

Մարդը ներկայումս հնարավորություն ունի ստեղծելու իր կրկնօրինակը գենետիկորեն: Այստեղ առաջանում են նոր հեռանկարներ և նոր պատասխանատվություն:

Գիտության էությունը բարոյականությունից դուրս է, բայց դա չի նշանակում, որ էթիկան գիտության հետ ոչ մի կապ չունի: Այն կարող է ազդել հետազոտությունների ընթացքի վրա: *«Փաստը, որ մարդուն առանց իր համաձայնության չի կարելի փորձի ենթարկել, հետևում է ոչ թե գիտության էությունից, այլ մարդու իրավունքների և մարդասիրության սկզբունքներից»*, գրում է Կ. Յասպերսը իր «Պատմության իմաստն ու նշանակությունը» աշխատությունում:

Ժամանակակից գիտության զարգացման ընթացքում առաջանում են նորանոր խնդիրներ, որոնք էթիկական վերանայումներ են պահանջում: Եթե գիտական տեղեկությունն ինքնին չեզոք է, ապա նրա կիրառումը պահանջում է էթիկական մոտեցումներ: Գիտական նվաճումների տեխնիկական իրացումը մեծացնում է անկանխատեսելի հետևանքների ռիսկը: Արժեքային վերանայումների հետևանքը պետք է լինի մեծ զգուշավորությունն ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների նկատմամբ: Ասվածին խիստ համահունչ են վտանգավոր հետևանքներով հղի որոշ գիտափորձերի արգելման մասին գենետիկ գիտնականների կոչերը:

Հիմա մեզ համար տարօրինակ է հնչում հին հունական փիլիսոփաների ասածն այն մասին, որ ստրուկը խոսող գործիք է, որի նկատմամբ կիրառելի չեն մարդկային արժանապատվության մասին սովորական պատկերացումները: Բայց մենք միանգամայն հանգիստ ենք դատում այն մասին, որ մնացած կենդանի էակների նկատմամբ կիրառելի չեն արդարության և պատասխանատվության պատկերացումները: Բացառված չէ, որ մեր սերունդներին այդ պատկերացումները կթվան նույնքան անհեթեթ, որքան հին հույների պատկերացումներն ստրուկների մասին: Գիտության փանցումը իրականության նորանոր ոլորտներ, նրա ավելի ինտենսիվ ազդեցությունը բնական միջավայրի վրա և մեր պատասխանատվության մեծացումը աշխարհի վիճակի համար առաջացնում են գիտական գործունեության նոր կարգավորիչներ: Առաջանում են բիոէթիկա, համակարգչային էթիկա, ճարտարագիտական էթիկա, էկոլոգիական էթիկա, գլոբալ էթիկա և այլ նորանոր գիտություններ:

Ինչպես նշում է Ա. Ա. Գորելովը, *«Այսուհետև գիտնականը իր վրա մեծ պատասխանատվություն պետք է վերցնի շրջակա միջավայրի համար: Կատարել այս կամ այն հետազոտությունը, թե ոչ, հրապարակել նրանց տվյալները, թե ոչ - այս էթիկական հարցերը սրվում են գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց: Վերջին հաշվով էթիկական նոր հիմնախնդիրները պտտվում են հետևյալ հարցերի շուրջ. արդյոք մարդկային արժեքն է ավելի, թե՞ կենդանիների (բիոէթիկա), մարդկային հասարակության արժեքը, թե՞ անհատին (բժշկական էթիկա), մոլորակին՞ը, թե՞ մարդուն (գլոբալ էթիկա), մարդո՞ւնը, թե՞ նրա ստեղծած տեխնիկային (ճարտարագիտական և համակարգչային էթիկա)»:*

<sup>3</sup> Горелов А. А. Концепция современного естествознания. стр. 229.

Ա. Գորելովը շարունակում է. «*Էթոլոգիայի (վարքագծի ուսումնասիրություններ) բնագավառի ժամանակակից հետազոտությունները անհերքելիորեն ապացուցում են, որ կենդանիներին չի կարելի մեխանիզմ համարել: Նրանք զգում են ինչպես մարդիկ, և դա չի կարելի գիտական փորձի ժամանակ հաշվի չառնել: Նշանակում է այն բոլոր փորձերը, որոնց ժամանակ կենդանիներին ցավ են պատճառում, անբարոյական են: Բայց չէ՞ որ դեղորայքի մեծ մասը փորձարկում են կենդանիների վրա, և մարդիկ դեռ երկար «կքավեն» իրենց մեղքերը՝ փորձարկվող կենդանիներին հուշարձան կանգնեցնելով: Բարոյականության տեսակետից այս հարցը մնում է նույնը, ինչ և հազար տարի առաջ՝ թույլատրելի՞ է արդյոք սպանություն և ինչպիսի՞ հանգամանքներում: Կենդանիների վրա կատարվող փորձերի միակ ռացիոնալ արդարացումը զալիս է Արիստոտելի այն պատկերացումից, թե մարդը երկրային մյուս տեսակների համեմատությամբ ավելի բարձր է: Նա օրգանական աշխարհը դասակարգում էր, այն բաժանելով 3 աստիճանների՝ բուսական աշխարհ, կենդանական աշխարհ և մարդ, որն առաջին երկուսից բարձր է: Բայց դա ռացիոնալ հիմնավորում է և ոչ թե արդարացում, որովհետև ճշմարտությունը կապված է արդարության հետ, այսինքն՝ պարունակում է բարոյական սկիզբ, և այլ էակների պատճառած ոչ մի վնաս չի կարող բարոյական լինել»<sup>4</sup>:*

Կենդանի էակների հարաբերությունների էթիկային վերաբերող հարցերի ամբողջ շրջանակը քննարկվել է դեռևս հնում: Օրինակ՝ էթիկա-մանկավարժական խնդիր էր այն, թե կարելի՞ է կենդանի էակների նկատմամբ կիրառել իրավական պարտավորություններ այն պայմաններում, երբ կենդանիները չեն կարող մեզ հետ պայմանագիր կնքել, այսինքն՝ կարո՞ղ են արդյոք կենդանի էակները իրավական առումով մարդու հետ հավասար իրավունքներ ունենալ, կարո՞ղ են արդյոք կենդանի օրգանիզմները մարդկանց հետ հավասարաբեռ համարվել: Հին Հունաստանում այս հարցերի շուրջ բանավեճեր էին գնում, և հնչում էին ոչ միայն իրարամերժ, այլ նաև միջանկյալ կարծիքներ: Կենդանի էակները ընդունվում էին իրավահավասար, բայց ոչ հավասարաբեռ, կամ հավասարաբեռ, բայց ոչ իրավահավասար:

Իսկ ի՞նչ է ասում այս մասին Աստվածաշունչը: Ի՞նչ մոտեցումներ ունեն այս խնդրին հոգևոր հայրերը<sup>5</sup>:

Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «*Աստծու բոլոր ստեղծածները լավ են, և խոտան բան չկա*» (Ա Տիմ. 4:4). ուստի բնությունը պետք է հարգել և պահպանել, քանի որ այն Աստծու արարչությունն է: Տերն արժևորում է բնության գեղեցկությունը. «*Նայեցեք վայրի շուշանին, ինչպե՞ս է աճում. ո՛չ ջանք է թափում և ո՛չ հյուսում: Ասում են ձեզ, որ Սողոմոնն իսկ իր ամբողջ փառքի մեջ չհազնվեց նրանցից մեկի նման*» (Մատթ. 6:28-29): Մենք պիտի սիրենք բնությունը, մենք պիտի տեսնենք և զգանք նրանում Արարչին: Տերն ասում է. «*Պիտի սիրես քո մերձավորին, ինչպես քո անձը*» (Մատթ. 22:39): Ամերիկյան քրիստոնեական աստվածաբանները համարում են, որ ամեն մի արարած Աստծո ներկայությունն է, իսկ «մերձավորը»՝ էկոհամակարգ, և այս պատվիրանը ներառում է բոլոր մերձավորներին՝ ինչպես կենդանիներին, այնպես էլ բույսերին:

Ժամանակակից քրիստոնեական էկոաստվածաբանները համարում են, որ Աստված Ադամին տեղավորել է Եդեմի պարտեզում, որը կարելի է պատկերացնել որպես ամբողջ բնություն, «որպեսզի սա մշակի ու պահպանի այն» (Ծննդ. 2:15): Աստված հայտարարել է, որ այն ամենը, ինչ Նա ստեղծել է հինգ օրերի ընթացքում՝ մինչև մարդու արարումը, «բարի» է: Այսպիսով, ստացվում է, որ Աստված ներքին կարևորություն է տվել էակների ամեն մի տեսակի և ոչ թե միայն մարդուն:

1888 թ. հրատարակված «Կենդանիների պաշտպանության Հալիցյան ընկերության» ամսագրում պատմվում է Փարիզի գրադարանում Աստվածաշնչի հնագույն (ոչ կանոնական)

<sup>4</sup> Горелов А. А. Концепция современного естествознания. стр. 244.

<sup>5</sup> Մեջբերումներն արված են Կ. Գրիգորյան և այլք. «Բնապահպանություն և աստվածաբանություն» գրքից [3], էջ 182-187:

տեքստերից մեկի ֆրանսերեն թարգմանության մի հետաքրքիր գյուտի մասին: Նրա մեջ մտել էին որոշ հատվածներ, որոնք բացակայում են Աստվածաշնչի ժամանակակից հրատարակություններում: Այդ հատվածներում Քրիստոսը հանդես է գալիս որպես կենդանիների պահապան: Դրանցից մեկում պատմվում է, թե ինչպես մի անգամ Քրիստոսը բարձրանում է սարը և հանդիպում է մի մարդու, որ անխնա ծեծում էր ջրում: Հիսուսը հարցնում է նրան.

- Մարդ, ինչո՞ւ ես ծեծում քո կենդանուն կամ չե՞ս տեսնում, որ նա չի կարող ծանրություն տեղաշարժել, և չե՞ս տեսնում, թե ինչպես է նա ցավին համբերում:

Մարդը պատասխանում է.

- Ինչպե՞ս եմ ես վերաբերվում: Ես կարող եմ նրան ծեծել, ինչքան ուզում եմ, քանի որ իմ սեփականությունն է, ես ինձ համար գնել եմ այն և վճարել նրա համար:

- Իսկ դու չե՞ս լսել նրա ողբերն ու բողոքները:

- Ո՛չ, Տե՛ր, չեմ լսել, որ նա հեծեծա և բողոքի:

- Վա՛յ քեզ: Եթե չես լսել, թե ինչպես էր նա հեծեծում և բողոքում Երկնավոր Փրկչի առաջ և ողորմություն խնդրում, ապա երիցս վա՛յ նրանց, ումից որ նա իր ցավերի մեջ բողոքում էր ու տրտնջում:

Ըստ Մովսեսի օրենքի՝ շաբաթ օրը պիտի հանգստանան ոչ միայն մարդիկ, այլև ընտանի կենդանիները, և յոթերորդ տարին արտերում հասած բերքը պիտի թողնվի անասուններին (Ելք 20:10, 23:10):

**Առակաց** գրքում Աստված պատվիրում է մարդուն հոգատար լինել Երկրի նկատմամբ, որպեսզի նա մշտապես վայելի Իր պարգևած բարիքները: «*Խնամքով վարվիր դաշտի կանաչի հետ, որ խոտ հնձես, դալար խոտ հավաքիր, որ ոչխարներդ գեղմնաբեր լինեն, և դաշտերը լավ պահիր, որ գառներ ունենաս*» (Առակ. 27:25-26): «*Խելաստորեն հոգատար եղիր քո հոտերի անասունների նկատմամբ, սրտացավ եղիր քո երանակների համար*» (Առակ. 27:23): «*Արդարը խղճում է իր անասունին, բայց ամբարիշտները անողորմ են*» (Առակ. 12:10): Տերը պատվիրում է բարեկամաբար օգնել անգամ թշնամու անասուններին. «*Եթե տեսնես, որ թշնամուդ գրաստը բեռան ծանրության տակ ընկել է, նրա կողքից անտարբեր մի՛ անցիր, այլ նրան օգնելով՝ բարձրացրու այն*» (Ելք 23:5):

Նոյին հրամայված էր փրկել բոլոր կենդանիներին՝ անկախ մարդկանց համար նրանց օգտակարությունից, քանի որ նրանք բոլորն արարված էին Աստծու կողմից և ունեին կրոնական արժեք (կամ ինչպես ասում են ժամանակակից էկոփիլիսոփաները՝ ներքին արժեք): Ամեն արարած դեր ունի ողջ էկոհամակարգի մեջ և հրաշալի է իր յուրահատկություններով: Մարդը հաճախ չի կարողանում ճշմարիտ գնահատական տալ արարածներին, քանի որ արժևորում է նրանց միմիայն իրեն պիտանի լինելու դիրքերից: Հովհան Ոսկեբերանն այս մասին ասում է. «*Մի՛ հանդգնիր անարգել Աստծու արարածներին միայն այն պատճառով, որ քեզ հայտնի չէ նրանց նպատակը*»:

Դժբախտաբար, այսօր տեսակները պաշտպանվում են համարյա միշտ միմիայն մարդկանց օգտակար լինելու տեսակետից, մինչդեռ հենց Նոյի պատմությունը սովորեցնում է, որ կյանքի նկատմամբ հավերժական հարգանք պետք է տածել: Աստված կամենում է, որ տեսակները շարունակեն իրենց գոյությունը, և ամեն մարդ, ով ուզում է ոչնչացնել տեսակը հանուն «զարգացման», ոտնձգություն է անում Աստծու առանձնաշնորհի նկատմամբ: Հիշենք Աստծու պատվիրանը՝ տրված Նոյին. «*Ամեն տեսակ թռչուններից, ամեն տեսակ կենդանիներից, երկրի ամեն տեսակ սողուններից՝ բոլորից երկու-երկու, արու և էգ, թող մտնեն քեզ հետ, որ կերակրվեն քեզ հետ: ...Նաև երկնքի անպիղծ թռչուններից յոթ-յոթ՝ արու և էգ, և պիղծ թռչուններից երկու-երկու՝ արու և էգ, որ սերունդ պահպանվի ողջ երկրի վրա*» (Ծննդ. 6:20, 7:3):

Երանելի Սիդվանոսն ասել է. «*Աստծու Հոգին սովորեցնում է խղճալ բոլոր արարածներին, այնպես որ առանց անհրաժեշտության չես ուզում նույնիսկ ծառի տերևը վնասել: Իսկ մարդու վրա պարտականություն է դրված հոգ տանել ամբողջ արարչության համար, ուստիև, ամեն մի վնաս, որ առանց կարիքի հասցվում է կենդանուն կամ բույսին, հակասում է շնորհի օրենքին: Շնորհից*

*զրկվածը չի ընկալում աշխարհի գեղեցկությունը և ոչ մի բանի վրա չի զարմանում»:*

Միջնադարում Ռուսաստանում կիրարկվել է անտառի օրհնության (նվիրագործման՝ անձեռնմխելի դարձնելու) կարգը: Վ. Դալը հետևյալ կերպ է նկարագրում այդ օրհնության կարգը. *«Անտառի նվիրագործումը՝ նրանում ծառահատման արգելքը, արվում է հանդիսականությամբ. քահանան սրբապատկերներով կամ նույնիսկ խաչվառներով նրա շուրջը ժողովրդի և ավագների հետ, երգում են «Փառք ի բաժունս» և արգելում են մուտքն անտառ որոշակի թվով տարիներ»:* Ռուսաստանի որոշ նահանգներում անձեռնմխելի էին համարվում եկեղեցիների հարևանությամբ աճած պուրակները: Մեզանում էլ՝ հայերիս մեջ, հեռավոր մենաստանների, վանքերի տարածքներից անգամ պտղատու ծառերի միրգը չէին պոկում, հավաքում:

Եթովպիայում քրիստոնեական եկեղեցիների շրջակա հողը սուրբ է. այստեղ չի կարելի վարել, ծառեր հատել, նույնիսկ՝ նրանցից տերև պոկել: Արդյունքում, շատ եկեղեցիների շրջակայքում ապրում են այնպիսի կենդանիներ, որոնք այլ վայրերում համարյա ոչնչացված են: Նոր եկեղեցու շինարարության ժամանակ հատկապես կարևոր է տնկել երկու ծառ՝ ձիթենի և մայրի:

Ֆրանցիսկ Ասիզացին (1182-1226 թթ.) առաջիններից մեկն էր, որ ընդգծել է բնության հետ մարդու հոգևոր իրավահավասարությունը: Նա ընդգծում էր Աստծո ներկայությունը արարածների բազմազանության մեջ և Նրա ցանկությունը, որ մարդիկ ուրախանան այդ բազմազանությամբ և փառաբանեն Աստծուն դրա համար: Նա համարում էր, որ փառաբանությունը պիտի արտահայտվեր այնպիսի արարքներով, որոնք համաձայնեցված էին ստեղծված բազմազանության հանդեպ հարգանքի հետ, և ոչ թե պարզապես կենդանի էակներին վնաս պատճառելուց խուսափելու խիստ կանոնը պահպանելով: Նմանապես բոլոր կենդանի էակներին պետք է վերաբերվել հնարավորինս քնքշորեն: Բնությունն արժեքավոր է ոչ միայն շնորհիվ իր՝ մարդկանց օգտակար լինելու, այլև Աստծո բարեհաճ ներկայության արտահայտության բազմաթիվ ձևերով:

Ֆ. Ասիզացին ուղղակիորեն քարոզում էր կենդանիներին և բույսերին: Նա կարդում էր Աստվածաշունչը թռչունների, ծաղիկների և ձկների համար: Նա համարում էր, որ ոչ թե արարածները պիտի ծառայեն մարդուն, այլ մարդը նրանց: Նա կենդանիներին համարում էր մեկ ընտանիք մարդկանց հետ: Բոլոր արարածները, նրա կարծիքով, լավ են, նրանց մեջ նա տեսնում է Աստծուն: Ֆ. Ասիզացու հոգատարությունը կենդանիների հանդեպ հասավ այն աստիճանին, որ նա չէր սպանում նրանց: Նա հանդես էր գալիս որպես պաշտպան անազատ (բռնված, վանդակված) գազանների, խնամում էր նրանց կամ ազատում: Բազեն կամովին ծառայում էր նրան՝ որպես զարթուցիչ: Նա հարգում էր նաև անկենդան բնությունը, իսկ ամեն մի կենսաձևի մեջ տեսնում էր սրբության տարր: Նա հավատում էր, որ բնությունն ինքնին արժեքավոր է, քանի որ ստեղծված է Աստծու կողմից և կախված չէ մարդու՝ իրեն վերագրված արժեքից: Մարդու հարաբերությունները բնության հետ պիտի կրեն փոխադարձ կախվածության բնույթ:

Ֆ. Ասիզացին բնությունը դիտում էր որպես իր Արարչի արտացոլում և գազաններին, թռչուններին, լուսնին, աստղերին, քրին անվանում էր իր «եղբայրներ» ու «քույրեր» և հորդորում էր բնության ամեն տարրի հետ վերաբերվել եղբոր կամ քրոջ պես՝ առանց շահագործելու, առանց ստորադասելու: Նա ձգտում էր մարդու անսահման տիրապետության գաղափարը փոխարինել բոլոր արարածների (ներառյալ մարդու) հավասարության գաղափարով:

Բենեդիկտյան վանականությունը (5-6-րդ դդ.) համոզված էր, որ ամեն բան շրջակայքում լավ է, այն պետք է զնահատել, հարգել և պատվել: Ամբողջ աշխարհին պետք է հոգատարությամբ վերաբերվել: Ամեն բան աշխարհում արժեքավոր է և ունի իր նպատակը: Ամեն ինչ գեղեցիկ է, որակյալ և դրական:

Ժամանակակից քրիստոնեական աստվածաբան Է. Լինզին եզրակացնում է. *«Եթե արարչությունն արժեքավոր է Աստծու համար, ապա այն պետք է զնահատվի և մարդու կողմից: Եթե բոլոր արարածներն ունեն իրենց արժեքը, ապա մարդը չի կարող հավակնել բացարձակ արժեքավորության մյուս արարածների շարքում»:*

Ամերիկացի հիդրոլոգ Ու. Լոդերմիլքը 1939 թ. առաջարկել է քրիստոնեական 11-րդ պատվիրանը. «Պահպանիր և սիրիր քո մայր բնությունը այնպես, ինչպես քո մերձավորին և քո Արարչին»: Մեկ այլ աստվածաբան՝ Ռիչարդ Բեերը կարծում է, որ, եթե աշխարհը պատկանում է Աստծուն, ապա մարդն իրավունք չունի տնօրինելու այլ էակների ճակատագիրը, քայքայելու նրանց միջև եղած փոխհարաբերությունները: Ավելին, Աստված բոլոր արարածներին օժտել է հավասար իրավունքներով:

Իրենց օրինակով սրբերն ու սրբակենցաղ անձինք ցույց են տվել, որ բնության հետ ներդաշնակությունը լիովին հնարավոր է հենց երկրի վրա՝ հենց այսօր, և դա կախված է միայն ու միայն մարդու վերաբերմունքից:

Հայ Եկեղեցու ծիսակարգը բազմիցս տալիս է անկենդան ու կենդանի բնության նկատմամբ քրիստոնյայի վերաբերմունքի ձևակերպումները: Այստեղ խոստովանելով, որ երկիրն ու նրա յուրաքանչյուր տարր Տիրոջն են պատկանում, զոհանալով, որ Նա այդ ամենն իրեն է հանձնել, մարդը խնդրում է Տիրոջն օրհնել դրանք: Մեր ծիսակարգում քրիստոնյան հստակ գիտե, որ բարիքները սխալ գործածելու (մեղքերի) դեպքում դրանք կարող են վերցվել իրենից: Այստեղ նաև սահմանվում է, որ բնական աղետներն էլ մարդու մեղքերի արդյունք են և դրանք կանխելու, ինչպես նաև դադարեցնելու համար համայնական ապաշխարություն է անհրաժեշտ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի 24 անգամ կատարում է անդաստանի կարգ. այս արարողությամբ օրհնվում են աշխարհի չորս ծագերը, ինչպես նաև Հանրապետությունն ու Հայրապետությունը, երկիրը, անդաստանները, տարվա պտղաբերությունը, վանքերը, բնակավայրերը և նրանց բնակիչները:

Այստեղ ամենայն մանրամասնությամբ երկրագործական մտահոգություններն են բերում Աստծո առաջ և Նրանից պահպանություն խնդրում և՛ հողի, և՛ անասունների, և՛ մշակների, և՛ ապրող բոլոր էակների համար: Այսպիսով, ակնհայտ է, որ մարդն իրեն պատասխանատու է զգում ոչ միայն իր հոգածության ներքո ապրող մարդկանց՝ ծերերի, երիտասարդների համար, այլև բոլոր ապրող էակների:

Իսկ մեր օրերում բարոյական գլխավոր ուղենիշը գրված օրենքներն են, որոնք գիտության որևէ բնագավառում եղած արդյունքների հիման վրա կոնկրետացնում են բարոյական հիմնական կանոնները: Այդ կանոնները, որպես որոշակի մասնագիտական ոլորտի կարգավորիչներ, խիստ անհրաժեշտ են, ինչպես Հիպոկրատի երդումը բժշկության մեջ: Գիտությանը բարոյականությունը չի խանգարում, այլ նրան որոշակիորեն կողմնորոշում է:

«Գիտությունն ու էթիկան» խնդրին են առնչվում 2007 թվականին Կոլումբիայի համալսարանում Իրանի նախագահի ելույթի հետևյալ տողերը. «Զբացահայտված բնագավառները, աներևույթ աշխարհներն ու անհասանելի գիտություններն անսահման են, և փակ պատուհանները գիտնականների աշխատանքով ու ջանքերով են բացվում դեպի ճշմարտություն... Գիտությանն ուղղված ճնշումներից մեկը դրա շրջանակները փորձարարական գիտություններով սահմանափակելն է, մինչդեռ գիտության տիրույթը շատ ավելի ընդարձակ է: Աշխարհի ճշմարտությունները չեն սահմանափակվում նյութական ճշմարտություններով... Եթե գիտությունն ու առաքինությունը համատեղվեն, թե՛ գիտնականը լավ գիտություն կստանա, թե՛ մարդիկ ճիշտ ձևով կօգտվեն գիտությունից:

... Գիտնականներն ինչքան ավելի են առաջ անցել գիտության ասպարեզում, այնքան ավելի խոնարհ են գտնվել մարդկանց նկատմամբ ու ավելի վեհ բարոյականությամբ օժտվել: Մարդկության բոլոր խաղաղարարներն սկզբում եղել են լավ գիտնականներ ու ուսուցիչներ: Հոգևոր մեծերի մասին պատմող առակներից մեկում նշվել է. «Այն ժամանակ, երբ գիտնականն առաքինի լինի,

*աշխարհը կկանգնի ճշմարիտ ուղու վրա»:*

*Գիտության բնագավառը սուրբ է... Անարդարների մուտքն այս բնագավառ անարգանք է մարդկության նկատմամբ»:*

Բարոյական օրենքներն էվոյուցիոն բնույթ ունեն, և էթիկան որպես գիտություն զարգանում է: Ընդ որում, գիտության ու տեխնիկայի առաջընթացի մեր բեկումնային ժամանակաշրջանում, երբ իրականությունը փոխվում է գլխապտույտ արագությանը, ոչ պակաս սրընթաց փոփոխություններ կարող են տեղի ունենալ նաև էթիկայում:

Գործնական առումով այդպիսի առաջընթաց քայլ էր, գիտության պատմության մեջ նախադեպը չունեցող, 1975 թ. գիտնականների կողմից բակտերիաների նոր շտամների ստացման ուղղությամբ կատարվող հետազոտությունների դադարեցումը: Այդ արգելքը, որը երկար չտևեց, առաջին փորձն էր, որին հետևեցին ուրիշները: Ներկայումս պաշտոնապես արգելված են մարդու կլոնավորման հետազոտությունները, սակայն այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են՝ լուրջ բանավեճերի առիթ տալով:

Կլոնավորման ժամանակ նոր օրգանիզմ է ստեղծվում մեկ այլ կենդանի օրգանիզմից վերցրած բջիջից: Բնության մեջ գոյություն ունեն բնական կլոններ, օրինակ՝ մեկ մայրական ձվից ստացված մանրէների սերունդը: Բույսերի կլոնները կարելի է աճեցնել մարմնական բջիջներից սննդամիջավայր պարունակող փորձանոթներում: Այս եղանակով անցյալ դարի 50-ական թվականներին ստացել են գազարի ու ծխախոտի կլոններ: Կենդանիների առաջին կլոններն ստացել է գերմանացի գիտնական Յանս Շպեմանը 20-րդ դարի սկզբներին: Նրան հաջողվել է ստանալ երկվորյակ գորտեր: Այսօր արդեն հաջողվել է կլոնավորել կենդանիների մի քանի տեսակներ՝ ոչխար, մուկ, խոզ, կապիկ, կատու:

2002 թվականի վերջում ԱՄՆ-ի գիտնականները հայտնեցին մարդու սաղմի բնային բջիջների կլոնավորման առաջին հաջողությունների մասին: Մարդու կլոնավորման աշխատանքների մասին խոսելը դժվար է, քանի որ դրանց մի մասը գաղտնի է կատարվում: Սակայն որոշ հեղինակներ հայտարարում են, որ մոտ ապագայում այդ բնագավառում հաջողությունների կհասնեն: Իսկ շատ երկրներում՝ Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Բելգիայում, Նիդեռլանդներում, Իսպանիայում մարդու կլոնավորման ուղղությամբ կատարվող աշխատանքներն արգելված են:

Անկասկած, մարդու կլոնավորումը բազմաթիվ վտանգներ է պարունակում, այդ թվում ներարգանդային շրջանում պտղի շեղումների առաջացումը, ինչպես նաև դրա հետևանքների անկանխատեսելիությունը:

Բնականոն բեղմնավորման ժամանակ արական սեռական բջիջը՝ սպերմատոզոիդը, մոտենալով իգական սեռական բջիջին՝ ձվաբջիջին, թափանցում է նրա մեջ: Այդ երկու բջիջների կորիզները միաձուլվում են, առաջանում է զիգոտ՝ մարդկային մարմնի առաջին բջիջը, որը սկսում է տրոհվել՝ առաջացնելով երկու, հետո չորս, ութ և բազմապատիկ բջիջներ, որոնք հենց այն «բնային» բջիջներն են, որոնց ուզում են օգտագործել մարդկանց կլոնավորման համար (Նկ. 5): Ինչպես նշվեց, որոշ երկրներում մարդկանց կլոնավորումը արգելող օրենք է ընդունվել, սակայն այդ օրենքը չի արգելում սաղմնային բնային բջիջների ստացումը:

1998 թվականին գիտնականները կարողացան սննդային միջավայրում աճեցնել մեծ քանակությամբ մարդկային բնային բջիջներ: Այս բջիջները կարող են զարգանալ՝ սկզբնավորելով մարդու օրգանիզմի ցանկացած տեսակի բջիջներ (մոտավորապես 200 տեսակ):

Բնային բջիջները կարող են փոխարինել Պարկինսոնի հիվանդությամբ, շաքարախտով, սրտի բրոնխիակաան, երիկամների, լյարդի հիվանդություններով, քաղցկեղով տառապող մարդկանց հիվանդ բջիջները: Արդեն մի քանի տարի է, որ արյան որոշ հիվանդությունների բուժման համար բժիշկներն օգտագործում են բնային բջիջներ՝ կատարելով արյունաստեղծ բնային բջիջներ պարունակող ոսկրածուծի փոխպատվաստում: Նմանօրինակ բուժումը ենթադրում է նաև վնասված հյուսվածքների վերականգնում: Բժշկության այս բնագավառի՝ «վերականգնողական բժշկության» մի քանի նկատառումներ վիճաբանությունների տեղիք են տալիս: Գիտնականների մի խումբ համարում է, որ մարդկային սաղմից կամ պտղից վերցված բնային բջիջներով արված փորձերը ոտնձգություն են մարդկային կյանքի սրբության հանդեպ և «անցնում են էթիկական և քաղաքական Ռուբիկոնը»:

Մարդու կլոնավորմամբ զբաղվող մասնավոր գիտական մի ընկերության ղեկավար BBC-ին տրված հարցազրույցում ասել է. «Գիտական, կենսաբանական առումով այն, ինչ մենք ստեղծել ենք, կենդանի էակ չէ: Այն ընդամենը բջջային կյանք է, դա մարդ չէ»: Իսկ ակադեմիկոս Վ.Պ. Կազնաչենը նշում է, որ «բջջային կուլտուրաները, ըստ էության, բջջային քաղաքակրթություններ են: Յուրաքանչյուր բջիջ ունի իր բջջային ինտելեկտը»<sup>6</sup>:

1997 թվականին ԱՄՆ-ի նախագահը արգելեց մարդկանց կլոնավորման աշխատանքների բյուջետային ֆինանսավորումը և, անսալով գիտնականների ու շարքային ամերիկացիների անհանգընստությանը, հայտարարեց. «Մարդկանց կլոնավորումը արգելել՝ անհապաղ, լրիվ և ընդմիշտ: Գիտության պատմության մեջ հայտնագործությունները ոչ հաճախ են ունենում այդքան մռայլ հեռանկարներ և այդքան մեծածավալ սպառնալիքներ, ինչպես դա տեղի ունեցավ կաթնասունների կլոնավորման ժամանակ: Այս փորձերի հեռանկարներն ու վտանգները կարելի է համեմատել չվերահսկվող միջուկային էներգիայի վտանգների հետ»<sup>7</sup>:

Այդուհանդերձ, գիտական շրջաններում կլոնավորման հեռանկարների մասին կարծիքները հակասական են: Կողմ և դեմ կարծիքներից յուրաքանչյուրն ունի իր փաստարկները:

Գիտնականների մի խմբի կարծիքով, մարդու կլոնավորումը արդեն մոտ է իրականությանը, որը մեզ բոլորիս տալիս է անհավանական առավելություններ: Կլոնը մարդու ուշացած երկվորյակն է: Սակայն երևակայական վեպերից և ֆիլմերից տպավորություն է ստեղծվել, որ մարդկային կլոնները անմիտ վայրենիներ են կամ հրեշներ: Այնինչ, մարդկային կլոնները կլինեն սովորական մարդկային էակներ: Նրանց 9 ամիս հետո լույս աշխարհ կբերի սովորական կին, նրանք կապրեն սովորական ընտանիքում, ինչպես ցանկացած երեխա: Կլոն-երկվորյակը կարող է լինել մի քանի տասնամյակով փոքր իր բնօրինակից: Հետևաբար կլոնը ոչ թե մարդու պատճենն է կամ նմանակը, այլ ուղղակի կրտսեր երկվորյակը: Մարդկային կլոնները իրավաբանորեն կունենան նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչպես ցանկացած մարդ:

Հարկ է նշել, որ մարդկային կլոնավորումը պետք է իրականացվի կամովի: Կենդանի մարդը, որին պատրաստվում են կլոնավորել, անպայման պետք է տա իր համաձայնությունը: Այն կինը, որը պետք է կրի կլոն-երկվորյակին և հետո մեծացնի նրան, նույնպես պետք է դա անի կամավոր սկզբունքով: Ուստի վտանգ չկա, որ գիտնական-չարագործները կստեղծեն հազարավոր կլոններ գաղտնի լաբորատորիաներում: Կլոնավորումը կկատարվի միայն սովորական մարդկանց խնդրանքով և մասնակցությամբ:

<sup>6</sup> Казначеев В. П. Проблемы живого космического пространства. // Интеллект планеты как космический феномен. Новосибирск, 1997, стр. 13.

<sup>7</sup> Чайрыш А. И. Правовые и этические проблемы клонирования человека. // Государство и право. № 11, 1998, п. 87-99.



Կլոնավորման ակնհայտ արդյունքը՝ երեխա չունեցող ընտանիքներին սեփական երեխաներ ունենալու հնարավորություն տալն է: Ռուսաստանում, ինչպես նաև մեզ մոտ, ամեն 6-րդ ընտանիքը երեխա չի ունենում: Կարելի է պատկերացնել թե ընտանեկան ինչ դրամաներ են ծավալվում այդ ընտանիքներում: Բայց պարզվում է, որ այդ իրավիճակը կարելի է փոխել, կարելի է ունենալ սեփական երեխա: Իհարկե, բեղմնավորումը տեղի է ունենում Պետրիի թասում, բայց հետո այն ներդրվում է մոր արգանդի մեջ:

Ներկայումս օրգանների կամ հյուսվածքների կլոնավորումը տրանսպլանտոլոգիայի, վնասվածքաբանության և բժշկության ու կենսաբանության այլ ճյուղերի հրատապ հարցերից է: Կլոնավորված օրգանները փրկություն կլինեն վթարի ենթարկված կամ հիվանդ մարդկանց համար:

Բոլորովին վերջերս փոխպատվաստումների բնագավառում բացվել է նոր ուղղություն: Բրիտանական Imutran կենսատեխնոլոգիական ընկերությունը խոզեր է բազմացնում նրանց օրգանները մարդկանց պատվաստելու համար: 1997 թվականին 20 մարդու արդեն պատվաստվել է խոզի լյարդ: 1998 թվականին պտղաճանճին ներմուծվել են մարդու այնպիսի գեներ, որոնք ուժեղացնում են բջիջների նյութափոխանակության արգասիքները դուրս բերելու հատկությունը և 40%-ով երկարացնում նրանց կյանքը:

Այդուհանդերձ, կլոնավորման դեմ հանդես եկող գիտնականները նշում են, որ այն բացառում է ապագա երեխայի ծնողների փոխադարձ սիրո հանգամանքը, որի արդյունքում պետք է ծնվեն երեխաները: Սիրո ներարգանդային փորձից զրկված, փորձանոթային մարդիկ կլինեն սառը, չոր և շրջապատի հետ չշփվող: Այդպիսի երեխան չի ունենա ներարգանդային շփում մոր հետ, որը մարդու հետագա կյանքի համար շատ կարևոր է: Իսկ ինչպիսին կլինեն մարդկային կլոնները, ոչ ոք չի կարող ասել:

Բացի դրանից, վտանգ կա, որ դաժան դիկտատորները կարող են փորձել հավերժացնել իրենց փառքը՝ ստեղծելով իրենց իսկ կլոնը և իրենցից հետո նրան տալով իշխանությունը: Ինչպես նաև վտանգ կա, որ այդպիսի մարդիկ կփորձեն ստեղծել գերբնական ուժի տեր հազարավոր կլոնավորված շվարցնեգերներ: Լոմոնոսովներ, պավարոտիներ կարելի է ստանալ բնական եղանակով, իսկ խելոք ու բարի մարդիկ կարելի է դաստիարակել:

Կլոնավորման տեխնոլոգիայի թանկության պատճառով հարուստները կարող են լրացուցիչ առավելություն ստանալ իրենց երեխաների համար, որը կարող է հանգեցնել կառավարող էլիտայի գեներտիկական լավացմանը: Գիտնականներից մեկը նշել է, որ էլիտան գործնականորեն կարող է դառնալ մարդկային առանձին տեսակ: Այս տեխնոլոգիայի հզորությունը և 20-րդ դարի ցեղասպանությունների օրինակները զգուշացնում են, որ գենային ինժեներիայի մեթոդները մարդկային գեների լավացման պատրվակով կարող են կիրառվել եվգենիկական նպատակներով:

ԱՄՆ-ի կառավարությունը տարեկան 35 մլն դոլար է տրամադրում մարդկային գեների քարտեզավորման համար: Դեռ ավելին, այս նախագծի սահմաններում ծրագրավորված է հավաքել աշխարհի 700 համայնքների մարդկային գենոմը: Այդ համայնքների հետ ոչ ոք չի խորհրդակցել, ոչ ոք նրանց նույնիսկ չի ասել, որ նրանց ԴՆԹ-ն առևտրային մեծ արժեք ունի և կարող է պատենտավորվել: Այս նախագծի իրական նպատակը պարզ չէ: Ինչու՞ են այդքան միջոցներ ծախսվում մարդկային բազմազանությունը գենային ինժեներիայի մեթոդով պահպանելու համար, փոխանակ մարդկանց գոյության պայմանները լավացնեն, ներդրումներ կատարեն բնապահպանական ծրագրերում:

Թախլանդում գիտնականները փորձում են կլոնավորել Ռամի 3-րդ թագավորի նշանավոր

սպիտակ փղին, որը սատկել է ավելի քան 100 տարի առաջ: 60-ական թվականներին Թաիլանդում ապրող 50 հազար վայրի փղերից մնացել են միայն 2000-ը: Թաիները փորձում են վերականգնել նրանց հոտը, բայց չեն հասկանում, որ եթե չդադարեցնեն մարդածին ավերումները և անտառների ոչնչացումը, ապա նույն ճակատագիրն է սպասում նաև կլոններին: Կլոնավորումը, ինչպես նաև գենային ինժեներիան մարդկության առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծման խղճուկ փորձեր են, քանի որ անտեսվում են այդ խնդիրների արմատական պատճառները:

Իսկ ինչ վերաբերում է մարդկանց կենդանիների օրգաններ փոխպատվաստելուն, ապա, չնայած դրական արդյունքներին, Եվրոպայի խորհուրդը 1999 թ. արգելել է կենդանիների օրգանների կլոնիկական փորձարկումները մարդկանց վրա: Հարցն այն է, որ կենդանիների որոշ վիրուսներ շատ նման են մարդու վիրուսներին. օրինակ՝ կովի կատաղության, կովերի լեյկեմիայի, խոզերի կեղծ կատաղության, կովերի իմունային անբավարարության վիրուսները, ինչպես նաև վերջին ժամանակներս ի հայտ եկած թռչնագրիպի վիրուսը: Կենդանիները կարող են օգտագործվել, որպես մարդկանց պահեստամասեր, բայց ինչպիսի՞ն կլինեն մեր օրգանիզմում խոզային բջիջների գտնվելու հետևանքները, հայտնի չէ: Փորձանոթում հետազոտվող գենը կարող է ցույց տալ այն, ինչին ինքը ընդունակ է միայն փորձանոթում: Նա մեզ չի պատմի, թե ինչպես կպահի իրեն օրգանիզմում, ուր որոշել են նրան ներմուծել: Օրինակ, պետունիա բույսի մեջ ներմուծած կարմիր գույնի գենը ոչ միայն փոխեց ծաղկաթերթիկների գույնը, այլև իջեցրեց բերքատվությունը և փոխեց բույսի արմատների ու տերևների աճը: Սաղմոն ձկան մեջ ներմուծած աճի հորմոնի գենը ոչ միայն ուժեղացրեց ձկան աճը, այլև փոխեց նրա գույնը՝ դարձնելով կանաչ:

Մենք չենք կարող համոզված լինել, որ գենետիկորեն փոփոխված բույսը, որը մենք որպես սննդամթերք ենք օգտագործում, չի սկսի հանկարծ արտադրել նոր թույներ և ալերգեններ կամ չի բարձրացնի քողարկված թույների մակարդակը: Իսկ ինչպիսի՞ն կլինի նրա սննդային արժեքը, կամ ի՞նչ ազդեցություն կունենա շրջակա միջավայրի ու վայրի բնության վրա: Այս բոլոր հարցերը ծայրահեղ կարևորություն ունեն, սակայն դեռևս չեն պարզաբանված:

Մարդու կլոնավորման հիմնական ընդդիմախոսը եկեղեցին է, որը կտրականապես դեմ է Աստծո գործերի մեջ մարդու խառնըվելուն: Այդ խնդրում եկեղեցին ունի իր հիմնավորումները. *«Նախ, ոչ մի երաշխիք չկա, որ կլոնավորումը կիրականանա: Ոչ ոք դեռևս մարդ չի կլոնավորել: Հնարավոր է, որ 20-30 տարի հետո գիտությունը հասնի դրան, սակայն կան բաներ, որոնք մարդը չի կարող ճանաչել, իմանալ, քանի որ նա Աստված չէ, և Տերը նրան թույլ չի տա իրականացնել այդ հրեշավոր գործը: Ի՞նչ հոգի կունենա այդ «մարդը», ի՞նչ գիտակցություն: Այս խնդրին այդքան անպատասխանատու կարող են մոտենալ միայն աթեիստները՝ անաստվածները, որոնք վստահ են, որ Աստված չկա, և որ մարդը ոչ այլ ինչ է, եթե ոչ օրգանական քիմիայի ու կիրառական կենսաբանության սինթեզ: Հարցն այն է, թե ինչ նպատակների համար է արվում կլոնավորումը: Դժվար թե հանուն սպորտային հետաքրքրության որևէ մեկը վատնի այդպիսի ահռելի գումարներ: Գիտնականները բերում են ընդամենը մեկ խելամիտ փաստարկ ի օգուտ կլոնավորման: Այն է՝ դոնորական նյութի արտադրությունը: Այսինքն, որպեսզի կլոնավորված մարդկանց մաս-մաս անեն և օգտագործեն որպես դոնորներ՝ իրենց բարեկամների համար: Եկեղեցին կտրականապես դեմ է այդպիսի նպատակին, չնայած սկզբունքորեն նա դեմ չէ դոնորությանը և օրգանների փոխպատվաստմանը: Մարդը մահացել է, նրա հոգին դուրս է եկել, իսկ մարմինը կարելի է օգտագործել ի շահ մեկ այլ մարդու: Սակայն կլոնավորումը դոնորության նպատակով անընդունելի է, քանի որ դա սպանություն է, ընդ որում պլանավորված և նպատակաուղղված: Եվ հետո, մարդիկ ունեն լրիվ գործնական շահեր: Բարոյական տեսակետից էլ մարտահրավեր նետել Աստծուն միայն հետաքրքրության համար՝ ճիշտ չէ, քանի որ դա նշանակում է խառնվել Աստծո գործերին: Կլոնավորված մարդը կունենա՞ հոգի, թե՞ ոչ, հայտնի չէ, նախադեպ չի եղել: Մարդը հոգի է ստանում*

բեղմնավորման պահին: Իսկ ի՞նչ կստանա նա կլոնավորման պահին: Եթե հոգի չլինի, ապա ներեցեք, դա կլինի մսագունդ, օժտված պարզագույն ռեֆլեքսներով, իսկ եթե հոգի լինի...դա ավելի սարսափելի է»:

Կլոնավորման խնդրին վերաբերող և՛ կողմ, և՛ դեմ կարծիքները յուրովի համոզիչ են: Եթե կլոնավորման փորձերը հաջողվեն էլ, դժվար է ասել, թե ստացված կլոնները բնության մեջ ինչ խորշ կզբաղեցնեն, ինչ ազդեցություն կթողնեն կենսոլորտի վրա կամ ինչպես կփոխեն նրա հոմեոստազը: Այս հարցի վերաբերյալ տեղին է հիշել 5-րդ դարի նշանավոր փիլիսոփա և բնագետ Եզնիկ Կողբացուն, որը բնության միասնականության գաղափարի կողմնակից է և միակ ու իրական էություն համարում է Աստծուն: Նա գրում է. «Որովհետև երբեք չստեսանք, որ կովերը էշեր ծնեին, էշերը՝ եզներ, ոչ էլ գայլերը՝ մաքիներ, մաքիները՝ աղվեսներ, առյուծները՝ ձիեր, ձիերը՝ օձեր, սակայն մի ծնունդ կա միայն, որը մարդիկ բնության օրենքներից դուրս հնարեցին՝ ձիերից ու էշերից ջորիներ ծնեցնել: Նրանք էլ անսերմ ու անծնունդ են, քանի որ ոչ թե Աստուծոց են ստեղծվել, այլ մարդկանց հնարամտությունից»<sup>8</sup>:

Եվ վերջապես, կլոնավորման գլխավոր բարոյաէթիկական խըն-դիրն այն է, թե արդյոք մարդն իրավունք ունի՞ ստեղծել էակ «իր պատկերով և նմանությամբ»: Եթե մենք բոլորս Բարձրյալի որդի-ներն ենք, արդո՞ք Նրա թոռները կհամարվեն օրինական ծնունդ-ներ:

Ուղեղի ուսումնասիրման բնագավառի խոշորագույն մասնագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռ. Ու. Սպերրին գրում է. «Գիտությունն այլևս չի գտնում, որ ամեն ինչ վերջին հաշվով կառավարվում է ֆիզիկայի հիմնարար ուժերով, և մեր Տիեզերքը զուրկ է արժեքներից, գիտակցությունից և նպատակից, անտարբեր է մարդկային հոգսերի նկատմամբ... Գիտությունն աշխարհը կփրկի ոչ թե տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման ճանապարհով, այլ նոր ուղենիշներ ու արժեքներ մշակելով, որոնց համապատասխան պետք է ապրել և որոնցով պետք է ղեկավարվել»<sup>9</sup>: Իսկ նոր ուղենիշներ մշակելիս պետք է հիշել բրիտանացի հայտնի ֆիզիկոս Ջեյմս Ջինսայի խոսքը՝ «Երբ էլեկտրոնը թրթռում է, ցնցվում է ամբողջ Տիեզերքը»:



Բովանդակություն

<sup>8</sup> Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, «Քննասեր», 2000:

<sup>9</sup> Сперри Р. У. Перспективы менталистской революции и возникновение нового научного мышления.: Сб. Ст.: Мозг и разум. Москва: Наука. 1998, стр. 24.